ձիգ գումարտակները վերածել գնդերի։ Կարճ ժամանակում կազմեցին վեց հայկական գնդեր՝ իւրաքանչիւրը բաղկացած 2 գումարտակից։

Արագ թափով զարգացող դէպքերը, սակայն, անհրաժեշտ դարձրին հայկական աւելի խոշոր զինուորական միութիւնների ստեղծումը, և հոկտեմբերին Հայոց Ազգային Խորհուրդը նոր դիմում արաւ՝ խնդրելով հայկական զօրագնդերի թիւը հասցնել 8-ի, իւրաքանչիւր գունդը դարձնել 3 գումարտակից, և այդ 8 գնդերը բաժանել չորսական գնդանոց երկու դիվիզիայի, մէկ բրիգադ այրուձիով, 15 մարտկոց հրետանիով ու յարակից տեխնիկական մասերով։

Կառավարութեան ոչինչ չէր մնում, բայց եթէ բաւարարել այդ դիմումը, քանի որ ռազմաճակատի փլուզումը ստանում էր աղէտաւոր ձևեր, և հայկական զօրամասերը կարող էին որոշ չափով մեղմացնել դրութիւնը։ 1917թ. դեկտ. 13-ին, կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարը № 136 հրամանով արտօնեց կազմել հայկական կորպուս՝ հրամանատար նշանակելով ռուսական բանակի լաւագոյն զինուորականներից մէկին՝ զօր. Թոմաս Նազարբէգեանին և սպայակոյտի պետ՝ զօր. Վիշինսկիին։

Սկսեց կազմակերպական եռուն աշխատանք։ Ազգային Խորհուրդը իր միջից կազմեց առանձին մի մարմին Ստ. Մամիկոնեանի գլխաւորութեամբ, որ զբաղւում էր կորպուսի գործերով։ Զօր. Նազարբէգեանի մօտ զինուորական նախարար Դոնսկոյի կողմից նշանակուեց յատուկ կոմիսար՝ Դրօն և վերջինիս օգնական՝ Սարգիս Մանասեանը։ Հետզհետէ հաւաքուեցին ռուս բանակի հայ սպաներն ու զինուորները և իրար յետեւից վերակազմուեցին հին մասերն ու կազմուեցին նորերը։ Ազգ. Խորհրդին և կորպուսի հրամանատարութեան զգալի օժանդակութիւն էր ցոյց տալիս և Հայ Զինուորական Միութիւնը սպայ Արսէն Շահմազեանի նախագահութեամբ և մի շարք եռանդուն սպաների անդամութեամբ—Գ.Տէր-Օհանեան, Տ.Անիեան և այլն։

Հայկական կորպուսի կազմակերպութեան գուգընթաց զօրահաւաքման ու զինուորական ուժերի կազմակերպումի գործով զբաղւած էր և արեւմտահայութիւնը, որը, աւելի քան ուրիշը, սարսափում էր կազմալուծումից և միջոցներ էր խորհում ճակատի փլուզումի առաջն առնելու համար։

Արեւմտահայ Բիւրօի նախաձեռնութեամբ, 1917թ. դեկտեմբերի ըսկզբներին, Թիֆլիսում, գումարուեց արեւմտահայութեան մարմինների ու քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից ու գործիչներից կազմւած մի խորհրդակցութիւն, որը մանրամասն քննութեան առնելով ճակատի պաշտպանութեան խնդիրը՝ որոշեց իր վրա առնել արեւմտահայկական մարտական ուժերի կազմակերպումը։ Այդ նպատակով ընտրուեց յատուկ մի մարմին՝ Ապահովութեան Խորհուրդը, որի մէջ մտան՝ Վահ. Փափազեանը (նախ.), Սեպուհը, Ա.Թերզիպաշեանը, Ց.Տէր-Զաքարեանը, և Ժ.Միրզախանեանը։ Խորհրդակցութիւնը որոշեց նաև յայտարարել պարտադիր զօրակոչ բոլոր արեւմտահայերի համար։ Կազմելու էր արեւմտահայկական առանձին դիվիզիա։ Ենթադրւում էր ստեղծել 15-20 հազարանոց մի զօրամաս։

Պէտք է ասել, որ դեռ այս որոշումից առաջ, զանազան վայրերում,